ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2012 թվականի N 473-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը>>՝ համաձայն N1 հավելվածի.

2) ջրամբարների պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N2 հավելվածի,

3) խոշոր հիդեհապայթունավտանգ օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) ձնաբքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N4 հավելվածի,

5) կոմունալ-էներգետիկ ցանցում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) համաճարակի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործելու պլանը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ